ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Խորենացի 3/7

<< 06 >> 02 2017թ. ք. Երևան

ՈՐՈՇՈՒՄ No 51/10

Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին

Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, քննարկելով անհատ ձեռնարկատեր Գայանե Արտեմի Մանուկյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը.

Պարզեցի

Համաձայն հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի տվյալների անհատ ձեռնարկատեր Գայանե Արտեմի Մանուկյանի (ՀՎՀՀ 57300204, հասցե՝ ք. Գյումրի, տնակ 117/078, պետական ռեգիստր՝ 29.829403, անձնագիր՝ AM 0268477, ՀԾՀ՝ 5101950467) հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չկատարված պարտավորությունը 25.01.2017 թվականի դրությամբ կազմել է 967.283 դրամ, /որից ապառք՝ 839.346 դրամ, տույժ՝ 101.614 դրամ, տուգանք՝ 26.323 դրամ/:

Վերոհիշյալ պարտավորության մասով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի իրավաբանական վարչությունում, համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, հարուցվել է վարչական վարույթ անհատ ձեռնարկատեր Գայանե Արտեմի Մանուկյանի չկատարած պարտավորությունը գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով, որի մասին 30.01.2017թ. պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն վարույթի նյութերին ծանոթանալու համար չի ներկայացել և որևէ բացատրություն չի տվել: *Անհատ ձեռնարկատիրոջ կողմից կատարվել է վճարում* և պարտավորությունը 03.02.2017թ. դրությամբ կազմում է 892.947 դրամ /որից ապառք՝ 778.814 դրամ, տույժ՝ 87.810 դրամ, տուգանք՝ 26.323 դրամ/: Եկամտային հարկի պարտավորությունը կազմում է՝ ապառք՝ 56.091 դրամ, տույժ՝ 6.434 դրամ, որը ներառում է 2016թ. օգոստոսից դեկտեմբեր ամիսների եկամտային հարկի վճարման ենթակա գումարները և հաշվարկված տույժը: Շրջանառության հարկի պարտավորությունը կազմում է՝ ապառք՝ 115.488 դրամ, տույժ՝ 6.304 դրամ, որը ներառում է 2016թ. երրորդ և չորրորդ եռամսյակների շրջանառության հարկի վճարման ենթակա գումարները և հաշվարկված տույժը: Սոցիալական վճարի (ամսական) պարտավորությունը կազմում է՝ ապառք՝ 6.007 դրամ, տույժ՝ 400 դրամ, որը ներառում է 2016թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների սոցիալական վճարի վճարման ենթակա գումարները և ուշ վճարելու հետևանքով հաշվարկված տույժը: Սոցիալական վճարի (տարեկան) պարտավորությունը կազմում է՝ ապառք՝ 14.468 դրամ, տույժ՝ 8.212 դրամ, որը ներառում է 2015թ. տարեկան հաշվարկի սոցիալական վճարի վճարման ենթակա գումարները և ուշ վճարելու հետևանքով հաշվարկված տույժը: Ներմուծման ավելացված արժեքի հարկի պարտավորությունը կազմում է՝ ապառք՝ 588.760 դրամ, տույժ՝ 66.460 դրամ, տուգանք՝ 26.323 դրամ, որը ներառում է 2016թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ներմուծման ավելացված արժեքի հարկի վճարման ենթակա գումարը և հաշվարկված տույժը: Գանձման ենթակա չկատարած պարտավորությունների նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր և տուգանքներ:

<<Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար է:

Համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքի՝ ՀՀ պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրը հարկային եկամուտներն ու պետական տուրքերն են, որոնց հավաքագրման շնորհիվ են կատարվում նույն օրենքով նախատեսված հանրային, պաշտպանության, հասարակական, անվտանգության, դատական գործունեության և այլ ոլորտներում նախատեսված ծախսերը: Նշվածից ելնելով և հաշվի առնելով պարտավորությունների գանձման կարևորագույն հանրային նշանակությունը՝ սույն որոշումը ենթակա է անհապաղ կատարման:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով << Հարկերի մասին>> ՀՀ օրենքի 29[1] հոդվածով, <Կուտակային կենսաթոշակների մասին> ՀՀ օրենքի 71-րդ հոդվածով, <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 11-րդ մասով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Անհատ ձեռնարկատեր Գայանե Արտեմի Մանուկյանից գանձել 892.947 դրամ պարտավորության գումար:

2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն:

3. Որոշման օրինակն եռօրյա ժամկետում ուղարկել (ֆիզ. անձին կամ) հարկ վճարողին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին ՝ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 70, 71 հոդվածներով սահմանված կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան :

Իրավաբանական
վարչության պետ Ա. Մնացականյան

Ստացա որոշման օրինակը

ստորագրություն հարկ վճարողի (կամ ֆիզ. անձիյ պաշտոնատար անձի անուն, ազգանուն ամսաթիվ

Կատարող՝ 10-րդ բաժնի առաջատար
մասնագետ Լ. Թորոսյան
Հեռ՝ (0312) 9 96 66